ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» ապրիլի 2021թ. № 186

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով,հիմք ընդունելով «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Դ. Տեր-Սիմոնյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լ. Մաթոսյանի գրությունը, «Ֆրանկոֆոն» ֆիլմերի ցուցադրման 4-րդ փառատոնին թիվ 2 դպրոցի սաների մասնակցությունը ապահովելու նպատակով՝ տրանսպորտային ծառայություն գնելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» գործառական դասակարգման, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ » տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածից հատկացնել 55 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 9
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 09 » ապրիլի 2021թ. № 187

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԾՐՈՒՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 63-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արծրուն Սողոմոնյանի 2021 թվականի ապրիլի 6-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Արծրուն Սողոմոնյանին (ՀՎՀՀ 66006527) տալ «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 82» հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 9
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» ապրիլի 2021թ. № 188

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ և 10-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը, «Գ.Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 01/111.4/02702-2021 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0136-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,02 հեկտար այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0136-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,02 հեկտար հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Երևանյան խճուղի, թիվ 97» հասցեն:

3. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը և 2-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել հողային հաշվեկշռում:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 13
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» ապրիլի 2021թ. № 189

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ԹԻՎ 53 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 5-ի թիվ 53 որոշմանը կից ցուցակում Մարտունուհի Եփրեմի Զոբանյանի անունը սխալմամբ գրվել է «Անուշ», հիմք ընդունելով Մարտունուհի Եփրեմի Զոբանյանի անձնագիրը և դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 5-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան, Շահումյան, Զարենցի և Ոփյան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 53 որոշմանը կից ցուցակի 38-րդ տողում նշված «Անուշ» բառը փոխարինել «Մարտունուհի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 13
ք.Սպիտակ